ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ ԵՆԹԱԿԱ
ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
ՂԵԿԱՎԱՐ

ИНСПЕКЦИОННЫЙ ОРГАН ПО
БЕЗОПАСНОСТИ ПИЩЕВЫХ
ПРОДУКТОВ ПРИ ПРАВИТЕЛЬСТВЕ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
РУКОВОДИТЕЛЬ

"_____" _____2019 թ.

_____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ Է. ԱՂԱՋԱՆՅԱՆԻՆ

Ի լրումն մեր 2019 թվականի մարտի 5-ի
թիվ 01/23.1/1320-19 գրության

Հարգելի պարոն Աղաջանյան

2018 թվականի նոյեմբերի 30-ին Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի միջև կնքված N 0624936 ծածկագրով «Սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման և էլեկտրական էներգիայի մատակարարման» ծառայության մատուցման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր)՝ 1.253.000 (մեկ միլիոն երկու հարյուր հիսուներեք հազար) ՀՀ դրամ արժեքով, միացման վճարի ընդհանուր գումարի և կատարված կանխավճարի տարբերությունը կազմում է 626.500 ՀՀ դրամ, որը համաձայն Պայմանագրի 5-րդ կետի Սպառողը վճարում է Մատակարարին էլեկտրական ցանցին միացման համար վերջինիս դուրս գրած հաշվարկային փաստաթղթի հիման վրա՝ էլեկտրական ցանցին միացմանը հաջորդող ամսում (էլեկտրական ցանցի միացման աշխատանքներն ավարտվել են 2019 թվականի փետրվար ամսում):

Ելնելով վերոգրյալից Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի 2019 թվականի գնումների պլանում անհրաժեշտություն է առաջացել կատարել ներհոդվածային փոփոխություն. /ծրագիր 1213, միջոցառում 11007, սննդամթերքի անվտանգության բնագավառում վերահսկողության իրականացման ծառայություններ/

Կոմիտասի պող. 49/2, 0051 Երևան, ՀՀ
Пр. Комитаса 49/2, Ереван 0051, РА

Тел./факс: (+374 12) 40 40 41
Эл. почта: g.avetisyann@ssfs.am
Веб-сайт: www.ssfs.am

ԳՄԱ կոդ՝ 65311100-1 (բյուջե) «էլեկտրականության բաշխում» չափաբաժնի տողից 626,500 (վեց հարյուր քսանվեց հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ հատկացնել ԳՄԱ կոդ՝ 71311320 «պատվիրատուի սպառման համակարգի միացում էլեկտրական ցանցին» տողին:

Հիմք ընդունելով «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ կետը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 1730-Ն որոշման 2.1 կետի 5-րդ ենթակետը խնդրում եմ Ձեր հանձնարարականը համապատասխան ստորաբաժանումներին՝ գնումների պլանում փոփոխություններ կատարելու և վճարումն իրականացնելու համար:

Առդիր 1 էջ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

11/21/2019

X

ԳԵՈՐԳԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Signed by: AVETISYAN GEORGI 2312770121

Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Կատ.՝ նյութատեխնիկական ապահովման և գնումների բաժին
(+374 012) 40-40-60